ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ՈՐ ՄԻՇՏ ԱՆԱՂԱՐՏ ՄՆԱ ՀՈԳԵՎՈՐ ԱԿՈՒՆՔԸ

Արցախ աշխարհի հոգևոր մշակույթի ակունքի հարատևման և նրա անաղարտության համար շնորհակալ աշխատանք է տանում մշակույթի խորհրդային ֆոնդի Լեռնային Ղարաբաղի մարզային բաժանմունքը, ուշի պատասխանատու քարտուղարն է մանկագիր ու երգահան Գուրգեն Գաբրիելյանը:

Բաժանմունքը ձեռնամուխ է եղել Արցախում հայ դպրության հիմնադրման 1500-ամյակի պատվին բազմապիսի միջոցառումների իրականացմանը: Այստեղ արդեն գործում են մի շարք խորհուրդներ («Մայրենի լեզու, մայրենի բարբառ», «Երկրագիտական խորհուրդ», «Հիշատակի օր», «Կյանքի կոչենք արցախյան մոռացված արհեստները», «Ո՞ւր ես, Արցախի երախտավորներ»): Բոլոր խորհուրդներում ընդգրկված են բանիմաց, իրենց գործին քաջատեղյակ մարդիկ, հայրենի մշակույթի ջատագովներ: Նախատեսված է ամեն տարի սեպտեմբերի երկրորդ կիրակին Ամարասում կազմակերպել «Հայ դպրության օր», որի ընթացքում իրենց ստեղծագործություններով հանդես կգան հայ գրականության և արվեստի նվիրյալ մարդիկ:

Բաժանմունքը ստեղծել է պատմագրական ձեռագիր աղբյուրների բաժին, ուր հավաքվում են Արցախ աշխարհի հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը ընդգրկող իրադարձությունների վերաբերվող վավերագրական փաստաթղթեր, հուշագրություններ:

Արցախի նյութական և մշակութային արժեքների պահպանման ու պրոպագանդման, դրանց պատմության վերականգնման ու սերունդներին ժառանգելու նպատակով հայտարարված է մրցույթ, որին կարող են մասնակցել բոլոր երրանք, ովքեր Արցախի պատմական ու մշակութային հուշարձանների, ժողովրդի պատմության, ավանդույթների, կենցաղի ու սովորույթների մասին արժեքավոր գործեր կներկայացնեն: Սահմանված է մեկ մրցանակ առաջին տեղի համար՝ 500 ռուբլի, երկու մրցանակ երկրորդ տեղի համար՝ 400-ական ռուբլի, երեք մրցանակ երրորդ տեղի համար՝ 300-ական ռուբլի:

Բաժանմունքը սկսել է վերականգնել հայ ազգային մոռացված տոները, պրոպագանդել դրանք, մասսաներին հասցնել դրանց իմաստն ու նշանակությունը: Այս օրերին Արցախում նախապատրաստվում են նշելու «Վարդավառի տոնը»:

Արցախում նոր ուժգնությամբ պետք է կարկաչեն մեր ազգային ակունքի հորդառատ ջրերը:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)